

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից

2015 թվականի հունվարի 29-ին

Պետական գրանցման համարը 3001564



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 51-Ն

ք.Ստեփանակերտ

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 82/299-Ն ՈՐՈՇՈՒՄ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 131-րդ հոդվածի 4-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**

1. Սահմանել համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի վերաբերյալ վերջին մեկ տարում տվյալ համայնքում հաշվառված լինելու մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2010 թվականի մարտի 2-ի «Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածու առաջադրվող քաղաքացու վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և տվյալ համայնքում հաշվառված լինելու մասին տեղեկանքների ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2005 թվականի փետրվարի 25-ի թիվ 3/10 և թիվ 3/11 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 82/299-Ն որոշումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կենտրոնական ընտրական հանձնաժողովի  
2015թվականի հունվարի 28 -ի N 51-Ն որոշման

N \_\_\_\_\_  
« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Վ Ե Ր Զ Ի Ն Մ Ե Կ Տ Ա Ր Ո Ւ Մ \_\_\_\_\_ Շ Ր Զ Ա Ն Ի \_\_\_\_\_ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ո Ւ Մ**

**Հ Ա Շ Վ Ա Ռ Վ Ա Օ Լ Ի Ն Ե Լ Ո Ւ Մ Ա Մ Ի Ն**

**Ք աղ ա ք ա ց ի \_\_\_\_\_**  
անուն, հայրանուն, ազգանուն

**ա ն ձ ն ա զ ի Ր` \_\_\_\_\_, տ ր վ ա ծ` \_\_\_\_\_**  
սերիա, համար ամսաթիվ և ում կողմից

**վ եր ջ ի ն մ ե կ տ ա ր ու մ հ ա շ վ առ վ ա ծ է \_\_\_\_\_ շ Ր Զ Ա Ն Ի \_\_\_\_\_**  
**հ ա մ ա յ ն ք ու մ :**

\_\_\_\_\_   
լիազոր մարմնի համապատասխան  
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

\_\_\_\_\_   
ստորագրություն

**Կ.Տ.**

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Հ Ա Ն Զ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի  
Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**